# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

02 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 182

## ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԵՓԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականին դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով՝ Վանիկ Վարդանի Գևորգյանի դիմումը.

Որոշում եմ՝

1. Քաղսի համայնքի վարչական տարածքում գտնվող Վանիկ Վարդանի Գևորգյանին պատկանող սեփական հողամասին (ծածկագիր 07-063-071-024) տրամադրել հասցե՝ գ. Քաղսի 2-րդ փողոց թիվ 2/5:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թ. _դեկտեմբերի _ _02_
գ.Քաղսի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 183

## ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշմամբ և հիմք ընդունելով՝ Բենյամին Հրաչիկի Բենյամինյանի դիմումը և համապատասխան քաղաքշինական փաստաթղթերը.

Որոշում եմ՝

1.Կոտայքի մարզի Քաղսի համայնքի բնակիչ Բենյամին Հրաչիկի Բենյամինյանի 1-ին փողոց թիվ 16/5 հասցեում տրված 0.00797 հա մակերեսով /նպատակային և գործառնական նշանակությունը՝ բնակավայրերի հասարակական կառուցապատման՝ կադաստրային ծածկագիր 07-063-0087-0055 / հողամասի վրա սպասարկման օբյեկտի կառուցման շինարարական աշխատանքների թույլտվության ժամկետը երկարաձգել 2/երկու/ տարով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021թ. __դեկտեմբերի__ _02_
գ.Քաղսի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 184

### ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Քաղսի համայնքի բնակիչներ Արմեն Հայրապետյանի, Ելենա Ենոքյանի, Անահիտ Վարդանյանի, Թաթոս Մարգարյանի, Ժիրայր Ավագյանի և Անժելա Հովհաննիսյանի դիմումները՝ դրամական օգնության վերաբերյալ.

Որոշում եմ՝

1. Քաղսի համայնքի բնակիչներ, սոցիալապես անապահով, Արմեն Հայրապետյանին, Ելենա Ենոքյանին, Անահիտ Վարդանյանին, Թաթոս Մարգարյանին, Ժիրայր Ավագյանին և Անժելա Հովհաննիսյանին յուրաքանչյուրին տրամադրել 50 000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով դրամական օգնություն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թ. _դեկտեմբերի _07 _
գ.Քաղսի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 185

### ԱՎԱՐՏՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ հոդվածով «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածով և համաձայն ՀՀ Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Նորոշմամբ հաստատված կարգի պահանջներով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

   *Նախագահ՝*

   Գուրգեն Բաղալյան – կառուցապատող

   *Անդամներ՝*

   ա/Անտոնյան Աշոտ -համայնքի ղեկավարի տեղակալ

   բ/<<ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻԶ>> ՍՊԸ-ի տնօրեն Տ. Վիրաբյան
2. Հանձնաժողովում ընդգրկել նաև օբյեկտի որակի տեխնիկական հսկողությունն իրականացնող, օբյեկտի հեղինակային հսկողությունն իրականացնող կազմակերպությունների ղեկավարներին
3. Հանձնարարել հանձնաժողովին ուսումնասիրելու և կազմելու ավարտված շինարարական օբյեկտի շահագործման ընդունման ակտերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թ. _դեկտեմբերի _ 07 _
գ.Քաղսի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 186

ԳՈՒՐԳԵՆ ԲԱՎՈՅԻ ԲԱՂԱԼՅԱՆԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ
/ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ / ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն և 2015 թվականի հոկտեմբերի 29-ի N1317-Ն որոշմամբ, հիմք ընդունելով քաղաքացի Գուրգեն Բաղալյանի 07.12.2021թ դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը .

Որոշում եմ՝

1. Գուրգեն Բավոյի Բաղալյանին տալ Կոտայքի մարզի Քաղսի համայնքի 1-ին փողոց թիվ 59 հասցեում <<Ավտոտնակի >> ավարտական ակտ / շահագործման թույլտվություն/:
2. Սյուն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թ. __դեկտեմբերի __ _09_
գ.Քաղսի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021 թվականի N 187

ԳՈՒՐԳԵՆ ԲԱԴԱԼՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասով ,

Որոշում եմ՝

1. Կոտայքի մարզի Քաղսի համայնքի 1-ին փողոց թիվ 59 հասցեում համասեփականատերեր Փիրուզա Բադալյանին / հանգուցյալ/ և Գուրգեն Բադալյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում, առանց համապատասխան թույլտվության, ավտոտնակի և տնտեսական շինության կառուցման շինարարական աշխատանքներ կատարելու համար ենթարկել վարչական պատասխանատվության ՝ նշանակել տուգանք 100.000/ հարյուր հազար // ՀՀ դրամի չափով:
2. Տուգանքի վճարումը կատարել սույն որոշման ստացման պահից 15-օրյա ժամկետում՝ հետևյալ հաշվեհամարով՝ 900125010208:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնապես իրազեկելուն հաջորդող օրը:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թ. դեկտեմբերի 10
գ.Քաղսի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Քաղսի, 098-910-932, qaxsi.kotayk@mail.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 188

### ԻՆՔՆԱԿԱՄ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Քաղաքացիական օրենսգրքի 118-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ, 11-րդ, 13-րդ և 22-րդ կետերի պահանջներով, և հիմք ընդունելով Գուրգեն Բավոյի Բաղալյանի՝ ծնված 1958 թվականի հոկտեմբերի 11-ին /անձնագիր BA2354737, տրված՝ 08.07.2015թ, 049-ի կողմից/ ներկայացված դիմումը և այն հանգամանքը, որ դիմումի առարկա ինքնակամ շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չեն առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք, նաև դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չեն ներկայացնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

*Որոշում եմ՝*

1. Քաղսի համայնքի վարչական տարածքում գտնվող / հասցե՝ գ. Քաղսի 1-ին փողոց տուն 59/ համասեփականատերեր Փիրուզա Բաղալյանին / հանգուցյալ/ և Գուրգեն Բաղալյանին սեփականության իրավունքով պատկանող 07-063-0043-0004 ծածկագրի տակ գտնվող 0.29673 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի վրա 2015թ-ին կառուցված ավտոտնակի ՝արտաքին մակերես՝ 60.80 քմ, և տնտեսական շինություն ՝ արտաքին մակերես՝ 78.96 քմ ինքնակամ շինությունները ճանաչել օրինական:

2. Համասեփականատերեր՝ Փիրուզա Բաղալյանին / հանգուցյալ/-և Գուրգեն Բաղալյանին սեփականության իրավունքով պատկանող վեր նշված հողամասի վրա 2015թ-ին կառուցված ինքնակամ շինությունները՝ ավտոտնակի ՝արտաքին մակերես՝ 60.80 քմ, և տնտեսական

շինություն արտաքին մակերես՝ 78.96 քմ համարել օրինական և որպես օրինականացման վճար նրանից գանձել ՝ 111 808 / հարյուր տասնմեկ հազար ութ հարյուր ութ / ՀՀ դրամ ։

3. 60-օրյա ժամկետում օրինականացման ընդհանուր գումարը՝ 111 808 ՀՀ դրամը վճարել համայնքի բյուջե, չվճարելու դեպքում սույն որոշումը համարել անվավեր:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌԱՖԱՅԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2021 թ. _դեկտեմբերի_ _14_
գ.Քաղսի